



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ [kotayk@mta.gov.am](mailto:kotayk@mta.gov.am)

01.06.2014թ. N 01/20/1808-14

**ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ**

*Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ*

***Սիրելի՛ երեխաներ***

Շնորհավորում եմ Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա առթիվ և ցանկանում, որ Ձեզ մշտապես ուղեկցեն անսահման երջանկությունն ու խաղաղությունը:

Թո՛ղ որ Ձեր ժպտադեմ հայացքներից երբեք չպակասեն մանկական անհոգությունն ու շրջապատված լինեք միմիայն բարությամբ:

Ցանկանում եմ, որ ամռան առաջին օրվա հետ յուրօրինակ կերպով համադրվող այս տոնի ջերմությունն իր ողջ առատությամբ Ձեզ պարզևի միմիայն երջանկություն և մանկական հիասքանչ տարիները լեցուն լինեն բացառապես հաճելի զգացողություններով:

Տոնական այս օրվա շրջանակներում անհրաժեշտ է հերթական անգամ ընդգծել երեխաների իրավունքների պաշտպանության ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության բոլոր արդյունավետ դրսևորումներն ու փաստել, որ վերջիններս նոր որակ և դրական զարգացումներ են հաղորդում այդ ասպարեզում իրականացվող ամենատարբեր գործընթացներին՝ հիմքում ունենալով ընտանիքի ամրապնդման գաղափարախոսությունը:

Օրվա ջերմ շնորհավորանքներին զուգահեռ պետք է դարձյալ շեշտենք, որ ինչպես այս, այնպես էլ տարվա մնացած բոլոր օրերին մեր շատ սիրելի երեխաներն արժանացել և արժանանալու են բոլորիս հոգատարությամբ:

Անսահման խինդ ու բերկրանք եմ մաղթում բոլոր երեխաներին՝ ցանկանալով, որ մանկության տարիներից յուրաքանչյուրը նշանավորվի նորովի խանդավառությամբ և գունագեղությամբ:

**Հարգանքներով՝**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**